



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93  
էլ. փոստ՝ [aparanigaxaqapetaran@gmail.com](mailto:aparanigaxaqapetaran@gmail.com), կայք՝ [www.aparan.am](http://www.aparan.am)

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ N 176-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025  
ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-Ի ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ապարան համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով «Տեղական  
ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածներով.

*Ապարան համայնքի ավագանին որոշում է.*

1. Ապարան համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 21-ի երկրորդ նստաշրջանի երրորդ նիստի  
օրակարգը հաստատելու մասին

(զեկուցող՝ Կ. Եղիազարյան)

2. Ապարան համայնքում տեղական տուրքերի և վճարների 2026 թվականի տեսակներն ու  
դրույքաչափերը հաստատելու մասին

(զեկուցող՝ Գ. Աբրահամյան)

3. Ապարան համայնքի ավագանու 11.02.2025թ. «ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի  
սեփականություն համարվող գույքի 2024 թվականի գույքագրման արդյունքները հաստատելու մասին»  
N 08-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

(զեկուցող՝ Ի. Թադևոսյան)

4. Ապարանի համայնքապետարանի վարչական շենքի առաջին հարկից 23.48 քմ մակերեսով տարածք  
ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայությանը անհատույց օգտագործման  
իրավունքով հատկացնելու մասին

(զեկուցող՝ Ի. Թադևոսյան)

5. «Ապարան համայնքի թվով 16 գյուղական բնակավայրերի (Նիգավան, Ծաղկաշեն, Եղիպատրուշ,  
Շենավան, Զորագյուլիս, Վարդենիս, Հարթավան, Արայի, Երնջատափ, Քուչակ, Մելիքգյուղ, Ափնագյուղ,  
Զքնաղ, Թթուջուր, Կայք և Շողակն) խմելու ջրագծերի վերակառուցում» սուբվենցիոն ծրագիրը  
հաստատելու մասին

(զեկուցող՝ Գ. Սահակյան)

6. Ապարան համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի ժամանակ ընտրված առաջարկ-  
նածագծի իրականացմանը հավանություն տալու մասին

(զեկուցող՝ Գ. Սահակյան)

7. Ապարան համայնքի մի խումբ բնակիչների հարկային արտոնություններ տրամադրելու մասին

(զեկուցող՝ Ն. Սիրեկանյան)

8. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքի միջոցով օտարելու  
թույլտվություն տալու մասին

(զեկուցող՝ Ա. Դադլարյան)

9. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի ավագանու 17.10.2025թ  
N166-Ա որոշման մեջ ուղղում կատարելու մասին

(զեկուցող՝ Ա. Դադլարյան)

10. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի ապարան համայնքի Եղիպատրուշ բնակավայրի վարչական տարածքներում գտնվող՝ քաղաքացի Արտակ Գոռի Ալեքսանյանի սեփականությունը հանդիսացող 02-040-0117-0015 կադաստրային ծածկագրով 1.289հա հողամասի նպատակային նշանակությունը և հողատեսքը փոփոխելու մասին

(զեկուցող՝ Ա. Դաղլարյան)

11. Ապարան համայնքի 2025 թվականի բյուջեի սեփական եկամուտներն ավելացնելու, պահուստային ֆոնդն ավելացնելու և բաշխում կատարելու նպատակով ապարան համայնքի ավագանու 23.12.2024 թ N 192-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

(զեկուցող՝ Ս.Շերիկյան)

12. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին

(զեկուցող՝ Ի. Թադևոսյան)

Ավագանի՝

(Կողմ – 19),

(Դեմ-0),

(Ձեռնպահ-0)

Եղիազարյան Կարեն  
Կարապետյան Արկադի  
Սեդրակյան Հայկ  
Պետրոսյան Գոռ  
Երեմյան Աղվան  
Ենոքյան Դավիթ  
Մակարյան Վահան  
Խալաթյան Արթուր  
Կարապետյան Կարեն  
Ավդալյան Արարատ  
Գեղամյան Խաչիկ  
Սահակյան Հովհաննես  
Մանուկյան Աղաբեկ  
Մխիթարյան Վարդան  
Ասատրյան Արամ  
Դավթյան Արտյոմ  
Կոստանյան Ժորա  
Սաֆարյան Սևակ  
Սարգսյան Սուրեն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝



Կ.Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղդասարյան 26, Հեռ. (0252)2-43-93  
էլ. փոստ՝ [aparanigaxaqapetaran@gmail.com](mailto:aparanigaxaqapetaran@gmail.com), կայք՝ [www.aparan.am](http://www.aparan.am)

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ № 177-Ն

### ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 19-րդ կետերի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով, համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի, «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի պահանջների.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Ապարան համայնքում տեղական տուրքերի և վճարների 2026թ. տեսակներն ու դրույքաչափերը՝ համաձայն N 1 հավելվածի, այդ թվում՝

1.1. Ապարան համայնքի մանկապարտեզները հաճախող երեխաների վարձավճարի 2026թ. դրույքաչափը և տրվող արտոնությունները՝ համաձայն N 1.1 հավելվածի

1.2. Ապարան համայնքի Ապարան քաղաքի արվեստի դպրոցում սովորող երեխաների վարձավճարների 2026 թ դրույքաչափերը և տրվող արտոնությունները՝ համաձայն N 1.2 հավելվածի

1.3. Ապարան համայնքի մարզադպրոցներում գործող խմբերի և նրանց ծառայություններից օգտվողների վարձավճարների 2026թ. դրույքաչափերը և արտոնությունները՝ համաձայն N 1.3 հավելվածի:

1.4. Ապարան համայնքի կոմունալ ծառայության կողմից իրականացվող աղբահանության ծառայություններից օգտվողների վճարների 2026 թ դրույքաչափերը՝ համաձայն N 1.4 հավելվածի

1.5. Ապարան համայնքի կոմունալ ծառայության կողմից իրականացվող՝ խմելու ջրի մատակարարման ծառայությունից օգտվողների վճարների 2026 թ դրույքաչափերը՝ համաձայն N 1.5 հավելվածի:

2. Համայնքի ղեկավար պարոն Կ. Եղիազարյանին՝ ապահովել տեղական տուրքերի և վճարների 2026թ. տեսակների ու դրույքաչափերի հրապարակայնությունն ու թափանցիկությունը, մոբիլիզացնել աշխատակազմի ուժերը՝ ապահովելու տեղական տուրքերի և վճարների ժամանակին գանձումները, և համայնքի վարչական սահմաններում սուբյեկտների կողմից ծավալած գործունեությունների համար սահմանված թույլտվությունների ժամանակին տրամադրումը:

3. Համայնքի վարչական տարածքը դասակարգել 2 ներքին գոտիների՝

1-ին գոտի՝ Ապարան քաղաք և միջպետական նշանակության ավտոմայրուղու կողեզրերին գտնվող Սուբյեկտներ

2-րդ գոտի՝ Համայնքի Քուչակ, Շենավան, Հարթավան, Ափնագյուղ, Արագած, Եղիպատրուշ, Երնջատափ, Շողակն, Արայի, Վարդենուտ, Ծաղկաշեն, Ջրամբար, Լուսագյուղ, Կայք, Չքնաղ, Սարալանջ, Վարդենիս, Չքնաղ, Թթուջուր, Ձորագլուխ, Նիգավան, Մելիքգյուղ բնակավայրերը:

4. Սույն որոշումը տարածվում է 01.01.2026 թ-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

Ավագանի՝

(Կողմ – 19),

(Դեմ-0),

(Ձեռնպահ-0)

Եղիազարյան Կարեն  
Կարապետյան Արկադի  
Սեդրակյան Հայկ  
Պետրոսյան Գոռ  
Երեմյան Աղվան  
Ենոքյան Դավիթ  
Մակարյան Վահան  
Խալաթյան Արթուր  
Կարապետյան Կարեն  
Ավդալյան Արարատ  
Գեղամյան Խաչիկ  
Սահակյան Հովհաննես  
Մանուկյան Աղաբեկ  
Մխիթարյան Վարդան  
Ասատրյան Արամ  
Դավթյան Արտյոմ  
Կոստանյան Ժորա  
Սաֆարյան Սևակ  
Սարգսյան Սուրեն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Կ.Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ  
2026 Թ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

| h/h                         | Տեղական տուրքի և վճարի տեսակը                                                                                                                                                                                                                                              | ԴՐՈՒՅՔԱԶԱՓ (ԴՐԱՄ)                                                           |
|-----------------------------|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------|
| Տ Ե Ղ Ա Կ Ա Ն Տ Ո Ւ Ր Ք Ե Ր |                                                                                                                                                                                                                                                                            |                                                                             |
| 1.                          | Համայնքի վարչական տարածքում ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար՝ |                                                                             |
| 1.1                         | հիմնական շենքերի և շինությունների համար                                                                                                                                                                                                                                    |                                                                             |
| ա.                          | մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական/ամառանոցային/տների համար՝                                                                                                                                                                | 15.000                                                                      |
| բ.                          | մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար                                                                                                                                                                | 15.000                                                                      |
| 1.2.                        | Բնակավայրերի տարածքում կառուցվող շենքերի և շինությունների, այդ թվում՝ հասարակական և արտադրական նշանակության շենք-շինությունների համար՝                                                                                                                                     |                                                                             |
| ա                           | 201-ից 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝                                                                                                                                                                                                                  |                                                                             |
| -                           | 13-16 գոտիների համար՝                                                                                                                                                                                                                                                      | 60.000                                                                      |
| -                           | 17-18 գոտիների համար՝                                                                                                                                                                                                                                                      | 30.000                                                                      |
| բ                           | 501-ից 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝                                                                                                                                                                                                                 |                                                                             |
| -                           | 13-16 գոտիների համար՝                                                                                                                                                                                                                                                      | 200.000                                                                     |
| -                           | 17-18 գոտիների համար՝                                                                                                                                                                                                                                                      | 100.000                                                                     |
| գ                           | 1001-ից 3000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝                                                                                                                                                                                                                |                                                                             |
| -                           | 13-16 գոտիների համար՝                                                                                                                                                                                                                                                      | 400.000                                                                     |
| -                           | 17-18 գոտիների համար՝                                                                                                                                                                                                                                                      | 200.000                                                                     |
| դ                           | 3001-ից ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝                                                                                                                                                                                                               |                                                                             |
| -                           | 13-16 գոտիների համար՝                                                                                                                                                                                                                                                      | 2.000.000<br>3000 քմ գերազանցող<br>յուրաքանչյուր 3000 քմ-ին՝<br>+ 2.000.000 |
| -                           | 17-18 գոտիների համար՝                                                                                                                                                                                                                                                      | 1.000.000<br>3000 քմ գերազանցող<br>յուրաքանչյուր 3000քմ-ին՝<br>+ 1.000.000  |
| 1.3                         | Ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝                                                                                                                                                                                                                                |                                                                             |
| ա                           | մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող շինությունների համար՝                                                                                                                                                                                                                |                                                                             |
| -                           | 13-16 գոտիների համար՝                                                                                                                                                                                                                                                      | 10.000                                                                      |
| -                           | 17-18 գոտիների համար՝                                                                                                                                                                                                                                                      | 7.500                                                                       |
| բ.                          | 20 քմ և ավելի ընդհանուր մակերես ունեցող շինությունների համար՝                                                                                                                                                                                                              |                                                                             |
| -                           | 13-16 գոտիների համար՝                                                                                                                                                                                                                                                      | 20.000                                                                      |
| -                           | 17-18 գոտիների համար՝                                                                                                                                                                                                                                                      | 15.000                                                                      |
| 1.4                         | Շենքերի և շինությունների, այդ թվում հասարակական և արտադրական նշանա-<br>կության շենք-շինությունների շինարարության թույլտվության ժամկետների<br>երկարաձգման յուրաքանչյուր տարվա համար՝                                                                                        |                                                                             |
| ա.                          | 200-500քմ ընդհանուր մակերես ունեցող շենք-շինությունների համար՝                                                                                                                                                                                                             |                                                                             |
| -                           | 13-16 գոտիների համար՝                                                                                                                                                                                                                                                      | 120.000                                                                     |
| -                           | 17-18 գոտիների համար՝                                                                                                                                                                                                                                                      | 60.000                                                                      |
| բ.                          | 501-1000քմ ընդհանուր մակերես ունեցող շենք-շինությունների համար՝                                                                                                                                                                                                            |                                                                             |
| -                           | 13-16 գոտիների համար՝                                                                                                                                                                                                                                                      | 400.000                                                                     |
| -                           | 17-18 գոտիների համար՝                                                                                                                                                                                                                                                      | 200.000                                                                     |
| գ.                          | 1001-3000քմ ընդհանուր մակերես ունեցող շենք-շինությունների համար՝                                                                                                                                                                                                           |                                                                             |

|     |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                             |                                                                             |         |
|-----|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------|---------|
| -   | 13-16 գոտիների համար՝                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                       | 800.000                                                                     |         |
| -   | 17-18 գոտիների համար՝                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                       | 400.000                                                                     |         |
| դ.  | 3001 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող շենք-շինությունների համար՝                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                        |                                                                             |         |
| -   | 13-16 գոտիների համար՝                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                       | 4.000.000<br>3000 քմ գերազանցող<br>յուրաքանչյուր 3000 քմ-ին՝<br>+ 4.000.000 |         |
| -   | 17-18 գոտիների համար՝                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                       | 2.000.000<br>3000 քմ գերազանցող<br>յուրաքանչյուր 3000 քմ-ին՝<br>+ 2.000.000 |         |
| ե.  | Շինարարության թույլտվության ժամկետները սահմանված ժամկետի մինչև 20% չափով, բայց ոչ ավել քան մեկ տարի ժամկետը, 1-ին անգամ երկարաձգելիս սահմանված տուրքը հաշվարկվում է՝                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                        |                                                                             |         |
| -   | 13-16 գոտիների համար՝                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                       | Բազային տուրքի 0,5<br>գործակցի կիրառմամբ                                    |         |
| -   | 17-18 գոտիների համար՝                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                       | Բազային տուրքի 0,5<br>գործակցի կիրառմամբ                                    |         |
| զ.  | Շինարարության թույլտվության ժամկետների հաջորդ երկարաձգումների դեպքում/անկախ երկարաձգվող ժամկետների տևողությունից/տուրքը հաշվարկվում է՝                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                      | 1.4 կետի<br>դրույքաչափերով                                                  |         |
| 2   | Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի, շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար, եթե հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝                                                                                                                                                                                                                                                    |                                                                             |         |
| ա   | չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝                                                                                                                                                                                                                                                                                                                               | 6.000                                                                       |         |
| բ   | բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (աթ՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա՝ բացի սույն կետի <ա> ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1/1-ին կետով սահմանված նորմերը՝ շենքերի մակերեսի ավելացման կամ գործառնական նշանակության փոփոխության մասով | 6.000 + 1-ին կետի<br>(ա) կամ (բ) ենթակետին<br>համապատասխան<br>դրույքաչափ    |         |
| գ   | նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (աթ՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա սույն օրենքով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասին 1-ին կետով սահմանված նորմերը:                                                                                                                                                                                                 | 1-ին կետի<br>(ա) կամ (բ) ենթակետին<br>համապատասխան<br>դրույքաչափ            |         |
| 3.  | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման /ապամոնտաժման/ թույլտվության համար՝                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                               | 10.000                                                                      |         |
|     |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                             | ՔԱՂԱՔ ԵՎ<br>ՄՊՆԱՃԱՍ                                                         | ԳՅՈՒՂԵՐ |
| 4.  | Համայնքի վարչական տարածքում լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                          | 200.000                                                                     | 200.000 |
| 4.1 | Համայնքի վարչական տարածքում լցավորման յուրաքանչյուր կայանում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                      | 200.000                                                                     | 200.000 |
| 4.2 | Համայնքի վարչական տարածքում լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                            | 200.000                                                                     | 200.000 |
| 5   | ՀՀ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձր-լեռնային բնակավայրերի տարածքում՝ լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝                                                                                                                                                                                                                                                                                                                                                     | 150.000                                                                     | 100.000 |

|     |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                 |         |         |
|-----|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------|---------|
| 5.1 | ՀՀ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձր-լեռնային բնակավայրերի տարածքում՝ լցավորման յուրաքանչյուր կայանում բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝                                                                                                                                                                                                                                                                             | 150.000 | 100.000 |
| 5.2 | ՀՀ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձր-լեռնային բնակավայրերի տարածքում՝ լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝                                                                                                                                                                                                                                           | 150.000 | 100.000 |
| 6   | Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտո-մեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսվարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, տարեկան՝                                                                                       | 30.000  | 20.000  |
| 7   | ՀՀ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձր-լեռնային բնակավայրերի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, կամավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսվարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ | 20.000  | 15.000  |
| 8   | Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար՝ տարեկան՝                                                                                                                                                                                                                                                                                                                                                        | 37.500  | 25.000  |
| 9   | Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝                                                                                                                                                                                                                                                                                                                                                              |         |         |
| ա.  | Ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                         |         |         |
| --  | Մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության դեպքում՝                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                        | 5.000   | 4.000   |
| --  | 26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության դեպքում՝                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                  | 6.000   | 5.000   |
| --  | 51-ից մինչև 100 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության դեպքում՝                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                 | 7.000   | 6.000   |
| --  | 101-ից մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության դեպքում՝                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                | 10.000  | 8.000   |
| --  | 201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության դեպքում՝                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                | 35.000  | 30.000  |
| --  | 501 և ավելի ընդհանուր մակերես ունեցող շինության դեպքում՝                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                        | 75.000  | 60.000  |
| բ.  | Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                  |         |         |
| --  | Մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության դեպքում՝                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                        | 4.000   | 3.000   |
| --  | 26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության դեպքում՝                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                  | 5.000   | 4.000   |
| --  | 51-ից մինչև 100 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության դեպքում՝                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                 | 6.000   | 5.000   |
| --  | 101-ից մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության դեպքում՝                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                | 10.000  | 8.000   |
| --  | 201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող շինության դեպքում՝                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                | 35.000  | 30.000  |
| --  | 501 և ավելի ընդհանուր մակերես ունեցող շինության դեպքում՝                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                        | 75.000  | 60.000  |
| 10  | Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի տարածքում բացօթյա առևտրի թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա 1 քմ համար՝                                                                                                                                                                                                                                                                                                                                               | 350     | 175     |
| 11  | Համայնքում ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տարեկան՝                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                           |         |         |
